ԵԱՀԿ մոդել համաժողով 2010

ԵԱՀԿ մոդել համաժողովը տեղի կունենա Երևանում՝ 2010թ. նոյեմբերի 5-6-ը:

- 56 հաջողակ դիմորդներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնելու է մեկ ԵԱՀԿ մասնակից պետություն, կընտրվեն ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից՝ համաժողովին մասնակցելու համար:
- Ընտրված դիմորդները կմասնակցեն ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից կազմակերպված մի շարք դասախոսությունների և նախապատրաստական գործնական դասընթացների՝ ԵԱՀԿ-ի գործունեության, դիվանագիտական հմտությունների և հրապարակային խոսքի թեմաներով:
- Համաժողովի բոլոր մասնակիցները որպես պարգևատրում կստանան ԵԱՀԿ մոդել համաժողովի մասնակցության պաշտոնական հավատարմագիր: Լավագույն մասնակիցները կստանան նաև խրախուսական մրցանակներ:
- Երեկոյան մասնակիցներին սպասում է հետաքրքիր ժամանց, որը կառաջարկվի ԵԱՀԿ մոդել համաժողովի կազմակերպիչների կողմից:

Մասնակցության համար

- պետք է լինել 18-25 տարեկան,
- ցանկալի է ունենալ ԵԱՀԿ մոդել համաժողովի փորձ:

Եթե Ձեր տվյալները համապատասխանում են, ապա՝

- Տեղեկացե՛ք գալիք ԵԱՀԿ մոդել համաժողովի մասին ԵԱՀԿ երևանյան գրասենյակից
- Ձեռք բերեք դիմումաձևերը ԵԱՀԿ երևանյան գրասենյակում կամ ԵԱՀԿ կայքէջում www.osce.org/yerevan
- Ներկայացրեք Ձեր դիմումները ԵԱՀԿ երևանյան գրասենյակ կամ ուղարկեք էլեկտրոնային տարբերակով մինչև 2010թ. սեպտեմբերի 24-ը:
- Նախընտրական փուլն անցած թեկնածուները հեռախոսով հարցազրույց կանցնեն՝ միջոցառմանը մասնակցելու համար:

model OSCE

Նոյեմբերի 5-6, 2010թ.

Երևան, Հայաստան

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) մասին

- ԵԱՀԿ-ն ամենաընդգրկուն տարածաշրջանային անվտանգության կազմակերպությունն է աշխարհում, որի 56 մասնակից պետությունների աշխարհագրական տարածքը ձգվում է Վանկուվերից մինչև Վլադիվոստոկ:

- Այն ունի 18 առաքելություններ հարավարևելյան Եվրոպայում, արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում:

- Կազմակերպության գործունեությունը ներառում է իր տարածաշրջանում վաղ ազդարարումը, հակամարտությունների կանխարգելումը, ճգնաժամերի կառավարումը և հետկոնֆլիկտային վերականգնումը:

- Կազմակերպության ռազմաքաղաքական, տնտեսական ու բնապահպանական և մարդու իրավունքների անվտանգության երեք ոլորտները զբաղվում են համապարփակ անվտանգության մի շարք խնդիրներով: Դրանք ներառում են սպառազինությունների վերահսկողություն, մարդկանց և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն, ժողովրդավարացում, ոստիկանության արդյունավետ ռազմավարություն, ահաբեկչության դեմ պայքար և տնտեսական և բնապահպանական գործունեություն:

- Բոլոր 56 մասնակից պետություններն ունեն հավասար կարգավիճակ և որոշումներն ընդունվում են կոնսենսուսի միջոցով քաղաքական, բայց ոչ իրավական պարտադրվածության հիմքերով:

ԵԱՀԿ մոդել համաժողով Հայաստանում

- ԵԱՀԿ մոդել համաժողովը ձգտում է ներգրավել նոր սերնդին, որը ԵԱՀԿ տարածաշրջանի ապագան է:

- Ձեր մասնակցությունը, Ձեր հետաքրքրությունը և Ձեր պատրաստակամությունը մասնակցել անվտանգության մարտահրավերներին, որոնց մենք այսօր դեմ ենք առնում, թարմ ուժ կհաղորդի տարածաշրջանում անվտանգ ապագա կառուցելու մեր ջանքերին:

- Հայաստանում երիտասարդները ոչ բավարար չափով են ներկայացված որոշումների և քաղաքականության մշակման մակարդակներում: Որպես մեր երկրի ապագա առաջնորդներ՝ նրանց պետք է հնարավորություն տալ մասնակցել այսօրվա քաղաքացիական կյանքին:

- Հայաստանում ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ է ստեղծել մի միջավայր, որտեղ առաջնորդների և ակտիվիստների նոր սերունդը կարող է մասնակցել ազատ քննարկումներին:

- Մամուլի և հանրային տեղեկատվության բաժնի հետ համատեղ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի երիտասարդական ծրագիրը աջակցում է երիտասարդների մասնակցությանը ժողովրդավարական գործընթացներին: ԵԱՀԿ մոդել համաժողովները հարստացնում են երիտասարդության գիտելիքները ժողովրդավարական որոշումների ընդունման և ԵԱՀԿ-ի՝ որպես անվտանգության բազմակողմանի գործչի մասին:

Մեր կոնտակտները

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ
Սունդուկյան 64/1
Հեռ. 010 229610/11/12/13/14, ներք. 5472

Տաթևիկ Խաչատրյան
ԵԱՀԿ մոդել ծրագրի օգնական
Հեռ. 091 29 03 08
Tatevik.Khachatryan@osce.org

Գոհար Ավագյան
Մամուլի և հանրային տեղեկատվության պատասխանատու
Gohar.Avaqvan@osce.org

Մելինե Նահապետյան
Ժողովրդավարացման բաժնի Երիտասարդական ծրագրերի համակարգող
Meline.Nahapetvan@osce.org

ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

www.osce.org/yerevan